

առաջի վարդապետացն» : Հանդանակութեան արդիւնքը եղաւ 700 թուման . որով ոչ միայն տուգանքն եւ անոր հետ կապուած ծախքերը վճարեցին , այլ եւ մնացեալ մասով «բազում գերիք եւ բանտարկեալք եւ դատապարտեալք սղատեցան» : Այսպէս Մովսէս եւ Պօղոս վարդապետները փրկեցին իրենց զլուխը եւ վերադարձան ողջամբ Անապատ , փառք տալով Աստուծոյ : Իսկ Շահուուզ սպանուեցաւ Շահին հրամանով (Դաւրիժ . 361—363) :

1619ին Մեծ Անապատն էր Մովսէս . այս թուին Սաշատուր քահանայ կ'օրինակէ Աւետարան մը «ի յերկիրս Մաջանջուխու , ի գիւղս Տանձաւէր» «ընդ հովանեաւ Ս . Ստեփանոսի ի սուրբ ուխտս Ստաթէի առաքելոյ<sup>5</sup>» , երբ հոն կը գտնուէր երջանիկ բարունապետն տէր Մովսէս «նմանեալ սրբոյն անյաղթ եւ քաջ քերթողին Մովսէսի» :

Քաջարի քարոզիչները թէպէտ գտած էին ժողովրդականութիւն , բայց ունէին իրենց դէմ շատերը , «արքանուանիք , եկեղեցականք եւ աշխարհականք» , որոնք ոչ միայն չընդունեցան անոնց քարոզութիւնը , այլ եւ կ'աշխատէին ամէն կերպ լռեցնել զանոնք . անոնց թուին մէջ էին Մելքիսեդեկ կաթողիկոս եւ

<sup>5</sup> Յ . Յ . Թօփճեան՝ Յուլիան , Բ . , էջ 55 . հմտ . եւ Ալիշան՝ Սիսական , էջ 282 : Մովսէս մեծ Անապատ կը գտնուէր նաեւ 1621ին . Մելքիսէթ երէց Մաշտոց մը կ'օրինակէ Ռշ թուին «ի ժամանակս մեծ բարունապետին մեծին Մովսէսի եւ Սարգիս պարոնտէր հօր Ս . Անապատին» . Թօփճեան , անդ , Ա . 47 :